Զուռնա

Հայաստանում տարածված հնագույն նվագարան է, որի մասին բազմիցս հիշատակվում է «Սասունցի Դավիթ» վիպերգությունում: Սասունցիների շրջանում այս նվագարանն ունի *փող* անվանումը: Տարածված է նաև կովկասյան մյուս ժողովուրդների կենցաղում, Իրանում, Միջին Ասիայում:

Իր զիլ ու սուր, ճչացող ձայնով փոքր-ինչ մոտ է պարկապզուկին, բայց ավելի «ծակող» երանգով, դրանով իսկ առանձնանում է մյուս բոլոր փողային նվագարաններից:

Ուղիղ, աստիճանաբար լայնացող փողը մի կողմից ունի ութ, հակառակ կողմից՝ մեկ ձայնանցք: Վերևի մասում հագցվում է ձայնի օղակաձև կարգավորիչ:

Զուռնան պատրաստվում է ծիրանենու կամ տանձենու փայտից:

Նվագարանն օգտագործվում է բացօթյա վայրերում, ժողովրդական տոնակատարություններում, հարսանիքներում և այլ արարողություններում:

Անսամբլային նվագարան է. ավանդաբար ստեղծվել են զուռնաչիների խմբեր՝ 2 զուռնա (մենակատար ու դամ պահող) և դհոլ:

Հնում զուռնա նվագել են նաև ռազմական երթերում: